**ԳԺ**՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ:

**8.14.** Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը (բացառությամբ՝ ապահովագրական հատուցումների) 20 (քսան) տոկոսի չափով վերադարձման ենթակա ապահովագրավճարից կարող են չնվազեցվել, եթե.

**8.14.1.** Պայմանագիրը/Վկայագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ Ապահովագրված անձանցից մեկի գծով դադարեցնելու և մեկ այլ Ապահովագրված անձով փոխարինելու դեպքում,

**8.14.2.** Պայմանագիրը/Վկայագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ Ապահովագրված անձանցից մեկի գծով դադարեցնելու դեպքում, եթե դադարեցման պահին Ապահովադիրն ունի Ապահովագրողի հետ գործող նմանատիպ (դադարեցման ենթակա Պայմանագրի/Վկայագրի հետ միևնույն ապահովագրության դասով) ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր 15 և ավելի Ապահովագրված անձանց գծով:

**ПВ** – страховая премия, подлежащая возврату
**ИП** – Итоговая страховая премия по Договору/Полису
**ОС** – оставшийся срок действия Договора/Полиса
**СД** – срок действия Договора/Полиса

**8.13.** В случае расторжения Договора/Полиса на основании условий, изложенных в п.8.9., Страховщик возвращает часть уплаченной страховой премии, за вычетом расходов, связанных с исполнением обязательств Страховщика по отношению к конкретному Застрахованному лицу в размере 20% (двадцати процентов) от предусмотренной Договором/Полисом итоговой страховой премии по следующей формуле, если иное не предусмотрено Договором/Полисом:

**ПВ = ПУ*СО/СД – ПУ*0.2**

**ПВ** – страховая премия, подлежащая возврату
**ИП** – Итоговая страховая премия по Договору/Полису
**ОС** – оставшийся срок действия Договора/Полиса
**СД** – срок действия Договора/Полиса

**8.14.** Расходы, связанные с выполнением обязанностей Страховщика (за исключением страховых выплат) могут не уменьшаться в размере 20 (двадцати) процентов от подлежащей возврату страховой премии в следующих случаях:

**8.14.1.** В случае прекращения Договора/Полиса в отношении одного из Застрахованных лиц по инициативе Страхователя и замене другим Застрахованным лицом.

**8.14.2.** В случае прекращения Договора/Полиса в отношении одного из Застрахованных лиц, если на момент прекращения Страхователь имеет со Страховщиком договор/полис с 15 и более застрахованными лицами (по аналогичному с подлежащем расторжению Договору/Полису классу страхования).

**8.15.** В случае расторжения Договора/Полиса по основаниям, предусмотренным п.8.6. и п.п.8.6.3., страховая премия, уплаченная Страхователем Страховщику, не подлежит возврату, если иное не предусмотрено Договором/Полисом.

**8.16.** Если в результате расчета подлежащей возврату суммы получается отрицательная сумма, то подлежащая возврату сумма устанавливается в нулевом значении (возврат страховой премии не производится).

**8.17.** В случае расторжения Договора/Полиса по основаниям, установленным в п.п. 8.6.1. и 8.6.2. Правил, по обоюдному соглашению Страхователя и Страховщика могут быть определены иные принципы расчета подлежащей возврату страховой премии.

**8.18.** Стороны могут направить все уведомления, предусмотренные Правилами и действующим

**8.15.** Պայմանների 8.6. կետի 8.6.3. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

**8.16.** Այն դեպքում, երբ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է հավասար զրոյին (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):

**8.17.** 8.6.1. և 8.6.2. ենթակետերով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել Պայմանագրի/Վկայագրի լուծման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

**8.18.** Կողմերը կարող են ՀՀ գործող օրենսդրությամբ և Պայմաններով նախատեսված բոլոր ծանուցումները Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված անձանց ուղարկել.

- գրավոր ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով՝ ստացման մասին ստորագրությամբ, կամ
- գրավոր ծանուցումն Ապահովագրողի, Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված փոստային հասցեին պատվիրված նամակով՝ հետպատասխան տեղեկացմամբ, ուղարկելու միջոցով, կամ
- գրավոր ծանուցումն Ապահովագրողի, Ապահովադրի/Ապահովագրված անձի՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

**8.19.** Ապահովագրողը, Ապահովադիրը/ապահովագրված անձը/ միմյանց միջև փաստաթղթերի (դիմումներ, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցումներ եւ այլն) կամ այլ տեղեկատվության փոխանակումը կարող են իրականացնել էլ.փոստի միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներից, և այդ կարգով ուղարկված և/կամ ստացված դիմումները, ծանուցումները և Պայմանագրի/Վկայագրի հետ կապված ամբողջ նամակագրությունը համարվում է պատշաճ տեղեկատվություն, դիմում, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցում: Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեներից փաստաթղթերի կամ տեղեկատվության ուղարկումը/ստացումը համարվում է պատշաճ ծանուցում:

**8.20.** Սույն Պայմաններով և ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով բոլոր ծանուցումները համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) համար, և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել՝

законодательством Республики Армения, лицам, предусмотренном в Договоре/Полисе:

- путем вручения письменного уведомления с подписью о получении на руки, или
- путем отправки письменного уведомления на отмеченный в Договоре/Полисе почтовый адрес Страховщика, Страхователя (Застрахованного лица, Выгодоприобретателя) заказным письмом- с обратным ответом, или
- путем отправки письменного уведомления на отмеченный в Договоре/Полисе или предоставленный письменно электронный адрес Страховщика, Страхователя /Застрахованного лица.

**8.19.** Страховщик, Страхователь/Застрахованное лицо могут обмениваться друг с другом документами (заявлениями, в том числе об убытке, оповещениями и т.д.) или иной информацией по отмеченным в договоре или предоставленным письменно адресам электронной почты, и отправленные и/или полученные данным способом заявления, уведомления и связанная с Договором/Полисом вся переписка, заявление, в том числе и заявление об убытке, уведомление считается достоверной информацией. Отправка/получение документов или информации с отмеченных в договоре эл.адресов считается надлежащим уведомлением.

**8.20.** Данными Правилами и в порядке, предусмотренном законодательством РА, все уведомления считаются надлежаще отправленными и/или полученными для Страховщика, Страхователя (Застрахованного лица, Выгодоприобретателя), а установленные сроки для выполнения определенных действий с их стороны начинают исчисляться уведомителем:

- при отправке на адрес электронной почты - со дня, следующего за днем отправки уведомления,
- при вручении уведомления с подписью на руки - со дня, следующего за днем вручения,
- при отправке заказным письмом - со дня, следующего за получением уведомления, либо возврата письма по какому-либо основанию почтовой службой.

## 9. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН

**9.1.** Страхователь имеет право:

**9.1.1.** получить информацию о Страховщике в объеме, порядке и на условиях, предусмотренных законодательством РА,

**9.1.2.** получать консультацию от Страховщике о Правилах и условиях Договора/Полиса,

**9.1.3** получить Правила, на основании которых заключается Договор/Полис,

**9.1.4.** потребовать от Страховщика произвести Выгодоприобретателю страховую выплату в случае

- Էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,
- ծանուցումը ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,
- պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձման պահին հաջորդող օրվանից:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**9.1.** Ապահովադիրն իրավունք ունի`

**9.1.1.** ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին` ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

**9.1.2.** Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Պայմանների, Ծրագրի և Պայմանագրի/Վկայագրի պայմանների գծով,

**9.1.3.** ստանալ Պայմանները, Ծրագիրը (առկայության դեպքում), որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը,

**9.1.4.** պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում` Պայմանագրի/Վկայագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

**9.1.5.** սույն Պայմանների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը,

**9.1.6.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարինել Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին մեկ այլ անձով` գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին, սակայն Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար, կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը,

**9.1.7.** Պայմանագիրը/Վկայագիրը կորցնելու դեպքում, համաձայն իր գրավոր դիմումի, ստանալ դրա կրկնօրինակը` համապատասխան գրառմամբ: Կրկնօրինակի տրամադրումից հետո արդեն իսկ կորած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժը կորցրած և դրանով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները համարվում են ուժը կորցրած:

**9.2.** Ապահովադիրը պարտավոր է`

**9.2.1.** Ապահովագրողին հայտնել ստույգ տեղեկատվություն Ապահովագրված անձի մասին, ներառյալ` բժշկական բնույթի տեղեկությունները և տրամադրել բժշկական փաստաթղթեր, եթե դրանք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկը գնահատելու համար,

**9.2.2.** վճարել ապահովագրավճարն (ապահովագրավճարի հերթական մասն) Ապահովագրողին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չափերով, կարգով և ժամկետներում,

**9.2.3.** Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել իրեն հայտնի բոլոր

признания случая страховым в объеме и порядке, установленным условиями Договора/Полиса.

**9.1.5.** досрочно прекратить Договор/Полис в соответствии с настоящими Правилами и законодательством РА,

**9.1.6.** в порядке, установленном законодательством РА, заменить Выгодоприобретателя, указанного в Договоре/Полисе, другим лицом, письменно уведомив об этом Страховщика. Однако Выгодоприобретатель не может быть заменен другим лицом, если Страховщику предъявлено требование о страховой выплате или если Выгодоприобретатель уже выполнил какую-либо из своих обязанностей по Договору/Полису.

**9.1.7.** В случае утери Договора/Полиса получить от Страховщика дубликат с соответствующей записью на основании своего письменного заявления. После выдачи дубликата, утраченный Договор/Полис считается недействительным и предусмотренные им права и обязанности считаются потерявшими силу.

**9.2.** Страхователь обязан:

**9.2.1.** сообщить Страховщику достоверную информацию относительно Застрахованного лица, включая сведения медицинского характера, и предоставить медицинские документы, если они необходимы для оценки страхового риска,

**9.2.2.** уплачивать страховую премию (страховые взносы) в размере, порядке и в сроки, установленные Договором/Полисом,

**9.2.3.** при заключении Договора/Полиса сообщить Страховщику об известных ему всех обстоятельствах, имеющих существенное значение для определения вероятности наступления страхового случая, если эти обстоятельства не известны Страховщику и не указаны в письменном заявлении Страхователя,

**9.2.4.** в период действия Договора/Полиса незамедлительно сообщать Страховщику о ставших известными ему изменениях в обстоятельствах, сообщенных Страховщику при заключении Договора/Полиса, если эти изменения могут существенно повлиять на увеличение страхового риска,
Сообщение об изменении страхового риска может быть отправлено Страховщику любым доступным способом – с дальнейшим письменным подтверждением в течение 10 (десяти) календарных дней.

**9.2.5.** В случае изменения адресов и/или реквизитов заранее проинформировать Страховщика об этом. Если Страхователь не уведомил заранее об изменении своего адреса или реквизитов, все уведомления и извещения, отправленные Страховщиком на предыдущий адрес, будут считаться отправленными надлежащим образом.

հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշելու համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն Ապահովագրողին և նշված չեն Ապահովադրի գրավոր դիմումի մեջ,

**9.2.4.** Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ հայտնել Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս նրան հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ապահովագրական ռիսկի փոփոխության մասին հաղորդագրությունը կարող է ուղարկվել Ապահովագրողին ցանկացած հասանելի ձևով՝ հետագա գրավոր հաստատումով՝ 10 (տասն) օրացուցային օրվա ընթացքում,

**9.2.5.** հասցեների և/կամ վավերապայմանների փոփոխության դեպքում նախապես տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին: Եթե Ապահովադիրը նախապես չի տեղեկացրել իր հասցեի կամ վավերապայմանների փոփոխության մասին, ապա Ապահովագրողի կողմից նախկին հասցեով ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները կհամարվեն պատշաճ ուղարկված,

**9.2.6.** Ապահովագրված անձին (Շահառուին) տրամադրել Պայմանների, Ծրագրի դրույթների, Պայմանագրի/Վկայագրի պայմանների մասին տեղեկություններ, ինչպես նաև Ապահովագրված անձին (Շահառուին) հայտնել նրա պարտավորությունները,

**9.2.7.** կատարել ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված այլ պարտավորությունները:

**9.3.** Ապահովագրված անձը (Շահառուն) պարտավոր է՝

**9.3.1.** սույն Պայմանների 4.1. կետի 4.1.1.-ից 4.1.4. ենթակետերով նախատեսված ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան 48 (քառասունութ) ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովագրված անձը (Շահառուն) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հետևանքով հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ տեղեկացնելը, ինչպես նաև Ապահովագրված անձի (Շահառուի) մահը: Նշված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ հայտնել Ապահովագրողին: Ապահովագրված անձը (Շահառուն) կրում է ապահովագրական պատահարի մասին սահմանված ժամկետում տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը,

**9.2.6.** довести до сведения Застрахованного лица (Выгодоприобретателю) положения Правил, условия Договора/Полиса, а также сообщить Застрахованному лицу (Выгодоприобретателю) о его обязанностях,

**9.2.7.** исполнять иные обязательства, установленные законодательством РА, Правилами и Договором/Полисом.

**9.3.** Застрахованное лицо (Выгодоприобретатель) обязано.

**9.3.1.** В случае наступления события, имеющего предусмотренные п. 4.1. п.п. 4.1.1.-4.1.4. признаки страхового события, незамедлительно, однако не позднее 48 (сорока восьми) часов по указанному в Договоре/Полисе телефонному номеру сообщить об этом Страховщику или его представителю. Исключение составляют случаи, когда Застрахованное лицо (Выгодоприобретатель) в результате события, имеющего признаки страхового случая, впал в бессознательное состояние или оказался в таком положении, по причине которого стало невозможным незамедлительно сообщить о событии, имеющем признаки страхового случая, а также смерть Застрахованного лица (Выгодоприобретателя). В случае исчезновения указанных обстоятельств, делающих невозможным обязанность уведомления, Страхователь обязан незамедлительно сообщить Страховщику о произошедшем событии, имеющем признаки страхового случая. Застрахованное лицо (Выгодоприобретатель) несет обязанность доказывания невозможности уведомления о страховом случае в установленный срок.

**9.3.2.** В случае наступления события, имеющего признаки страхового случая, незамедлительно сообщить об этом в соответствующие компетентные органы (Медицинское учреждение, Полиция и др.), однако, в случаях, предусмотренных в подпункте е пункта 10.1 Страхователь обязан обратиться в Полицию после предъявления аналогичного требования Страховщиком,

**9.3.3.** В случае наступления события, имеющего признаки страхового случая, не позднее чем за 45 (сорок пять) дней после уведомления об этом Страховщика явиться в офис страховой компании, письменно заполнить заявление утвержденной Страхователем формы с изложением всех известных ему подробностей относительно факта наступления страхового случая и представить необходимые документы, предусмотренные настоящими Правилами, для получения страховой выплаты. Письменное заявление может быть также представлено лицом, отличным от Застрахованного лица (Выгодоприобретателя). Форму письменного заявления

**9.3.2.** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում այդ մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն), սակայն Պայմանների 10.1. կետի գ) ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է դիմել Ոստիկանությանը Ապահովագրողի կողմից նմանատիպ պահանջ ներկայացվելուց հետո,

**9.3.3.** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում այդ մասին Ապահովագրողին տեղեկացնելուց հետո ոչ ուշ քան 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում ներկայանալ Ապահովագրողի գրասենյակ, լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևով գրավոր հայտային դիմում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի մասին նրան հայտնի իրադարձության բոլոր մանրամասնությունների շարադրմամբ և ներկայացնել համապատասխան փաստաթղթերն՝ ապահովագրական հատուցում ստանալու համար: Գրավոր դիմում կարող է ներկայացվել նաև Ապահովագրված անձից (Շահառուից) տարբեր անձի կողմից: Գրավոր դիմումի ձևն Ապահովագրված անձը կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից, որի հասցեն նշված է Պայմանագրում/Վկայագրում: Եթե Ապահովագրված անձը դժբախտ պատահարի արդյունքում հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալը, ապա նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովագրված անձը (Շահառուն) կրում է ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալու անհնարինության ապացուցման պարտականությունը: Ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը համարվում է երկարաձգված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված առավելագույն ժամկետով, եթե տվյալ փաստաթղթի ներկայացումն անհնար է դարձել իրավասու մարմինների կողմից դեռևս տրամադրված չլինելու/Ապահովագրված անձի մահվան դեպքում նրա ժառանգների կողմից Պայմանագրի/Վկայագրի գոյության վերաբերյալ ուշ տեղեկանալու հետևանքով,

**9.3.4.** ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

**9.3.5.** ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի կամ իրավասու պետական մարմնի պահանջով, սահմանված կարգին համապատասխան, անցնել զննություն՝ սթափության վիճակը որոշելու նպատակով,

**9.3.6.** կատարել Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտավորությունները,

**9.3.7.** այն դեպքում, երբ Ապահովագրված անձը հանդիսանում է անչափահաս, նրա պարտականությունները կրում է վերջինիս օրինական ներկայացուցիչը:

**9.4.** Ապահովագրողն իրավունք ունի՝

Застрахованное лицо может получить из офиса Страховщика, адрес которого указан в Договоре/Полисе.

Если Застрахованное лицо в результате несчастного случая впало в бессознательное состояние или оказалось в таком положении, по причине которого невозможна явка в офис Страховщика, то оно обязано сделать это сразу после исчезновения обстоятельств, делающих невозможным посещение офиса Страховщика. Застрахованное лицо (Выгодоприобретатель) несет обязанность доказывания невозможности явки в офис Страховщика в срок, предусмотренный для получения страховой выплаты. Срок представления предусмотренных настоящими Правилами необходимых документов для получения страховой выплаты законодательством РА считается максимально продленным, если предоставление данного документа стало невозможным из-за непредоставления его компетентными органами/позднего оповещения о наличии Договора наследников Застрахованного лица в случае его смерти,

**9.3.4.** предоставить соответствующие документы для получения страховой выплаты,

**9.3.5.** после страхового случая по требованию Страховщика или компетентного государственного органа в установленном порядке пройти тест на трезвость,

**9.3.6.** выполнить предусмотренные Правилами и Договором/Полисом обязанности,

**9.3.7.** в случае, когда Застрахованное лицо является несовершеннолетним, его обязанности несет законный представитель,

**9.4.** Страховщик имеет право:

**9.4.1.** перед заключением Договора/Полиса запросить у потенциального Страхователя или Застрахованного лица сведения, в том числе и медицинского характера, и потребовать проведения медицинского обследования потенциального Застрахованного лица для оценки состояния его здоровья,

**9.4.2.** в случае необходимости потребовать дополнительные сведения от Страхователя (Застрахованного лица, Выгодоприобретателя) или от соответствующих компетентных органов,

**9.4.3.** проверять информацию, сообщенную Страхователем, Застрахованным лицом, Выгодоприобретателем, а также выполнение Страхователем его обязанностей, вытекающих из Договора/Полиса,

**9.4.4.** применять разработанные им страховые тарифы и их поправочные коэффициенты для определения

**9.4.1.** նախքան Պայմանագրի/Վկայագրի կնքումը հնարավոր Ապահովադրից կամ Ապահովագրված անձից պահանջել տեղեկություններ, այդ թվում՝ բժշկական բնույթի, և պահանջել անցկացնել հնարավոր Ապահովագրված անձի բժշկական հետազոտում՝ նրա առողջական վիճակը գնահատելու համար,

**9.4.2.** անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկություններ Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) կամ համապատասխան իրավասու մարմիններից,

**9.4.3.** ստուգել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի կողմից հայտնած տեղեկատվությունն, ինչպես նաև Ապահովադրի կողմից Պայմանագրից/Վկայագրից ծագող իր պարտականությունների կատարումը,

**9.4.4.** կիրառել իր կողմից մշակված ապահովագրական սակագները և դրանց կարգավորիչ գործակիցները՝ ապահովագրավճարի չափը սահմանելու համար՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը, ապահովագրության պայմանները և ապահովագրական ռիսկի աստիճանը,

**9.4.5.** հետաձգել ապահովագրական հատուցման տրամադրումն Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու փաստով քրեական գործ հարուցվելու դեպքում՝ մինչև իրավասու մարմինների կողմից համապատասխան որոշման ընդունումը, ինչպես նաև դժբախտ պատահարի պատճառի մեջ կասկածի դեպքում՝ մինչև տվյալ փաստի հաստատումը,

**9.4.6.** հետաձգել ապահովագրական հատուցման կատարումը մինչև հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին ամբողջական տեղեկատվության, ինչպես նաև այն հաստատող փաստաթղթերի ստացումը,

**9.4.7.** ապահովագրական ռիսկի ավելացմանը հանգեցնող հանգամանքների ի հայտ գալու դեպքում Ապահովադրից պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխություն և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում: Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու Պայմանագրի/Վկայագրի լուծում,

**9.4.8.** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության փաստով կատարել դրա հանգամանքների ստուգում, անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո ստուգել դրանց հավաստիությունը,

**9.4.9.** իրականացնել Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովադրի կողմից հայտնած անձնական տվյալների (անձնական տվյալների մասին օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ

размера страховой премии, учитывая объект страхования, условия страхования и степень страхового риска,

**9.4.5.** отсрочить предоставление страховой выплаты в случае возбуждения уголовного дела по факту причинения вреда жизни и здоровью Застрахованного лица до принятия соответствующего решения компетентными органами, а также в случае сомнений в причине несчастного случая до утверждения данного факта.

**9.4.6.** отсрочить предоставление страховой выплаты до получения полной информации о произошедшем с основным/дополнительным Застрахованным лицом событии, имеющем признаки страхового случая, а также получения подтверждающих это документов,

**9.4.7.** в случае возникновения обстоятельств, ведущих к увеличению страхового риска требовать у Страхователя изменения условий Договора/Полиса и/или уплаты дополнительной страховой премии. Если Страхователь возражает против изменения условий Договора/Полиса и/или уплаты дополнительной страховой премии, Страховщик вправе потребовать расторжения Договора/Полиса.

**9.4.8.** по факту события, имеющего признаки страхового случая, проводить проверку его обстоятельств, после получения необходимых документов проверять их достоверность,

**9.4.9.** осуществить обработку персональных данных (в соответствии с законодательством РА о персональных данных), сообщенных Страхователем при заключении Договора/Полиса (в том числе их распространение, использование, хранение, а также предоставление третьим лицам), в целях осуществления страховой деятельности, предоставления информации о страховых продуктах и о продуктах своих партнеров, в том числе для осуществления со Страхователем прямых контактов с помощью средств связи, а также в иных целях, не запрещенных законодательством, если иное не предусмотрено Договором/Полисом,

**9.4.10.** по своему усмотрению сократить перечень обязательных для предоставления документов, требуемых от Страхователя (Застрахованного лица, Выгодоприобретателя, наследников) (например, подтверждающие факт, причину, обстоятельства или размер убытка и т.д.),

**9.4.11.** для принятия решения о страховой выплате при необходимости направлять в компетентные органы запросы об обстоятельствах наступления страхового случая, а также требовать от Застрахованного лица, Выгодоприобретателя или наследника предоставление дополнительных сведений и документов, подтверждающих факт и причину наступления страхового

Ապահովադրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

**9.4.10.** սեփական հայեցողությամբ կրճատել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի, ժառանգների) կողմից պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը (օրինակ` ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, պատճառը կամ հանգամանքները, վնասի չափը հաստատող և այլն),

**9.4.11.** ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ապահովագրական պատահար տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին, ինչպես նաև Ապահովագրված անձից, նրա Շահառուից կամ ժառանգից պահանջել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառը հաստատող լրացուցիչ տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրում, բացի այդ ինքնուրույն/անկախ փորձագետի միջոցով անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն՝ պարզելու համար ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության առաջացման պատճառները և հանգամանքները,

**9.4.12.** պահանջել ապահովագրական պատահարի կապակցությամբ իր հաշվին անցկացնել դատաբժշկական փորձաքննություն՝ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով,

**9.4.13.** իրականացնել այլ գործողություններ՝ Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականությունները սույն Պայմանների համաձայն կատարելու նպատակով,

**9.4.14.** ապահովագրական պատահարից հետո պահանջել Ապահովագրված անձից անցնելու զննություն՝ սահմանված կարգին համապատասխան սթափության վիճակը պարզելու նպատակով:

**9.5.** Ապահովագրողը պարտավոր է`

**9.5.1.** Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին, տալ պարզաբանումներ Պայմանագրի/Վկայագրի պայմաններին վերաբերող հարցերի գծով, Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո Ապահովադրին փոխանցել Պայմանագրի/Վկայագրի նրա օրինակը,

**9.5.2.** Ապահովադրին տրամադրել սահմանված ձևի անդորրագիր, եթե ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվել է կանխիկ,

**9.5.3.** հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու (նվազեցնելու) վերաբերյալ,

**9.5.4.** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա

случая, кроме того, самостоятельно/ с привлечением независимого эксперта провести экспертизу представленных документов для выяснения причин и обстоятельств наступления события, имеющего признаки страхового случая,

**9.4.12.** потребовать проведения судебно-медицинской экспертизы за свой счет в связи со страховым случаем для принятия решения о страховом возмещении,

**9.4.13.** осуществлять иные действия для выполнения своих обязательств по Договору/Полису в соответствии настоящими Правилами,

**9.4.14.** после страхового случая потребовать от Застрахованного лица в установленном порядке пройти тест на трезвость.

**9.5.** Страховщик обязан:

**9.5.1.** ознакомить Страхователя с правилами страхования, разъяснить вопросы, связанные с условиями Договора/Полиса, после заключения Договора/Полиса передать Страхователю его копию Договора/Полиса,

**9.5.2.** выдать Страхователю квитанцию соответствующей формы, если страховая премия (очередной страховой взнос) была уплачена наличными деньгами,

**9.5.3.** после получения всех необходимых документов для урегулирования заявления в течение 15 (пятнадцати) рабочих дней принять решение о выплате или об отказе(уменьшении) в страховой выплате,

**9.5.4.** при принятии решения о признании события, имеющего признаки страхового случая, страховым случаем, в течение 15 (пятнадцати) рабочих дней со дня принятия соответствующего решения произвести страховую выплату. Датой осуществления страховой выплаты считается день произведения выплаты из кассы Страховщика или списания денежных средств с расчетного счета Страховщика,

**9.5.5.** производить страховую выплату в сроки и на условиях, установленных Договором/Полисом и настоящими Правилами,

**9.5.6.** при принятии решения об отказе в страховой выплате или его уменьшении принятое обоснованное решение в течение 5 (пяти) календарных дней доставить заказным письмом Страхователю (Выгодоприобретателю) по адресу его постоянного местожительства,

**9.5.7.** обеспечить конфиденциальность и безопасность персональных данных, полученных от Страхователя (Выгодоприобретателя, Застрахованного лица) при их обработке.

**9.6.** В период действия Договора/Полиса в случае переорганизации Страхователя – юридического лица, с согласия Страховщика его права и обязанности переходят правопреемнику Страхователя в порядке, установленном законодательством РА.

ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում: Ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղից կանխիկ դրամի վճարման օրը կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվից միջոցների դուրսգրման օրը,

**9.5.5.** Պայմանագրով/Վկայագրով և սույն Պայմաններով սահմանված ժամկետներում և պայմաններով իրականացնել ապահովագրական հատուցման գումարի վճարում,

**9.5.6.** ապահովագրական հատուցումը մերժելու կամ նվազեցնելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքել Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության վայրի հասցեով,

**9.5.7.** ապահովել Ապահովադրից (Շահառուից, Ապահովագրված անձանցից) ստացված անձնական տվյալների գաղտնիությունը և անվտանգությունը դրանց մշակման ժամանակ:

**9.6.** Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի վերակազմակերպման դեպքում նրա իրավունքներն ու պարտականություններն Ապահովագրողի համաձայնությամբ անցնում են Ապահովադրի իրավահաջորդին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**9.7.** Յօգուտ այլ անձի Պայմանագիր/Վկայագիր կնքած ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի մահվան դեպքում Պայմանագրով/Վկայագրով սահմանված վերջինիս իրավունքներն ու պարտականություններն անցնում են այդ անձին՝ նրա համաձայնությամբ: Այդ անձի կողմից Պայմանագրով/Վկայագրով պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները կարող են անցնել այն անձանց, ովքեր, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, իրականացնում են Ապահովագրված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պարտականությունները:

**9.8.** Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը դատարանով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, Ապահովադրի իրավունքները և պարտականություններն անցնում են նրա խնամակալին կամ հոգաբարձուին:

**9.9.** Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) իրավունքներն ու պարտականությունները չեն կարող փոխանցվել այլ անձի առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:

**9.10.** Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսված լինել նաև կողմերի այլ իրավունքներ և պարտականություններ:

**9.7.** В случае смерти Страхователя – физического лица, заключившего Договор/Полис в пользу другого лица, права и обязанности последнего, установленные Договором/Полисом, переходят этому лицу с его согласия. При невозможности исполнения этим лицом обязанностей по Договору/Полису его права и обязанности могут перейти к лицам, выполняющим в соответствии с действующим законодательством РА обязанности по охране прав и законных интересов Застрахованного лица.

**9.8.** Если в период действия Договора/Полиса Страхователь судом был признан недееспособным или ограниченно дееспособным, права и обязанности Страхователя переходят его опекуну или попечителю.

**9.9.** Права и обязанности Страхователя (Застрахованного лица, Выгодоприобретателя) по Договору/Полису не могут быть переданы другому лицу без письменного согласия Страховщика.

**9.10.** Договором/Полисом могут быть предусмотрены также иные права и обязанности сторон.

## 10. ДОКУМЕНТЫ, ПРЕДОСТАВЛЯЕМЫЕ СТРАХОВЩИКУ В СЛУЧАЕ НАСТУПЛЕНИЯ СОБЫТИЯ, ИМЕЮЩЕГО ПРИЗНАКИ СТРАХОВОГО СОБЫТИЯ, ПОРЯДОК ВЫПЛАТЫ СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ

**10.1.** Для признания события страховым и для получения страховой выплаты Страхователь (Застрахованное лицо, Выгодоприобретатель, Наследники) должен представить Страховщику:

а) письменное заявление, где указаны обстоятельства данного события, а также банковский счет, на который будет перечислена страховая выплата. Форму заявления Страхователь (Застрахованное лицо, Выгодоприобретатель, наследники) может получить из офиса Страховщика,

б) оригинал паспорта или идентификационной карты заявителя - Застрахованного лица (Выгодоприобретателя, наследников), при необходимости также свидетельство о рождении или оригинал иного документа, подтверждающего личность,

в) паспорт Получателя страховой выплаты и надлежащим образом заверенная доверенность, в тех случаях, если страховое возмещение получит доверенное лицо Застрахованного лица,

г) в случае, когда страховой случай произошел с дополнительным Застрахованным лицом, выданный компетентным органом документ, свидетельствующий о факте, что дополнительное Застрахованное лицо является членом семьи Застрахованного лица,

д) в случае получения травмы головы или сотрясения мозга, ожога 3-ей или 4-ой степени, ранения, нанесенного

**10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**10.1.** Պատահարն ապահովագրական ճանաչելու և հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, ժառանգները) պետք է Ապահովագրողին ներկայացնի՝
ա) գրավոր հայտային դիմում, որտեղ նշված կլինեն տվյալ իրադարձության առաջացման հանգամանքները, ինչպես նաև այն բանկային հաշվեհամարը, որին կփոխանցվի ապահովագրական հատուցումը: Դիմումի ձևն Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, ժառանգները) կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից,
բ) դիմողի՝ Ապահովագրված անձի (Շահառուի, ժառանգների), անձնագրի կամ նույնականացման քարտի, Ապահովագրողի պահանջով նաև ծննդյան վկայականի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող այլ փաստաթղթի բնօրինակը,
գ) ապահովագրական հատուցումը ստացողի անձնագիրը և պատշաճ վավերացված լիազորագիրը այն դեպքերում, եթե ապահովագրական հատուցումը ստանալու է Ապահովագրված անձի կողմից լիազորված անձը,
դ) լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթը, որը վկայում է լրացուցիչ Ապահովագրված անձի՝ հիմնական Ապահովագրված անձի ընտանիքի անդամ լինելու փաստի մասին,
ե) գլխի վնասվածք կամ ուղեղի ցնցում, 3-րդ կամ 4-րդ աստիճանի այրվածք, կտրող-ծակող գործիքով պատճառված վերք, թափանցող վերք կամ հրազենային վնասվածք, պոլիտրավմա, սուր թունավորում, բռնի կամ հակաօրինական գործողությունների, ինքնավնասման կամ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ստացած վնասների, ինչպես նաև գիտակցության կորստի կամ մահվան դեպքում Ապահովագրողին տրամադրել պատահարի կապակցությամբ Ոստիկանության, նախաքննական մարմնի կամ դատարանի կողմից կայացված վերջնական որոշման օրինակը:.
զ) սույն Պայմանների 10.1. կետի ե) ենթակետում թվարկվածներից տարբերվող վնասվածքներ ստանալու դեպքում՝ Ոստիկանություն դիմելու փաստը հավաստող և/կամ դրա հիման վրա Ոստիկանության կողմից կայացված համապատասխան որոշման (տեղեկանքի) օրինակը, եթե այդպիսին պահանջի Ապահովագրողը,
է) արտադրությունում դժբախտ պատահարի մասին ակտ (անհրաժեշտության դեպքում, երբ պետք է սահմանվի պատահարի կապն Ապահովագրված անձի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ),
ը) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և/կամ Աահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր և տեղեկություններ:
**10.2.** Ապահովագրված անձին մարմնական վնասվածք պատճառվելու դեպքում Ապահովագրողին ներկայացվում են՝

колюще-режущим предметом, проникающего или огнестрельного ранения, политравмы, остром отравления, насильственных или незаконных действий, травмы, полученной в результате членовредительства или дорожно-транспортного происшествия, а также в случае потери сознания или смерти, предоставить Страховщику копию окончательного решения, вынесенного Полицией, следственным органом или судом в связи с данным событием,
е) копию подтверждающего факт обращения в полицию и/или вынесенного полицией на этом основании решения (справки), в случае получения травм, отличных от перечисленных в подпункте 10.1 д) настоящих Правил, если этого потребует Страховщик,
ё) акт о несчастном случае на производстве (при необходимости, когда должна быть установлена связь случая с исполнением Застрахованным лицом служебных обязанностей),
ж) другие документы и сведения, предусмотренные законодательством РА и/или затребованные Страховщиком.
**10.2.** При нанесении телесного повреждения Застрахованному лицу Страховщику представляются:
а) документы, указанные в п. 10.1. настоящих Правил,
б) медицинские документы:

- При амбулаторно-поликлинической помощи: медицинская справка, которая должна быть заполнена на бланке врача или медицинского учреждения и подписана лечащим врачом и где должны быть указаны имя, фамилия, дата поступления, проведенные и/или предписанные лабораторные и/или аппаратные обследования, предварительный диагноз, окончательный диагноз, предписанное лечение (список лекарств, включая дозу, количество дней их приминения), а также результаты проведенных лабораторных и/или аппаратных обследований,
- При стационарном лечении: эпикриз (выписка из истории болезни), который должен быть подписан лечащим врачом и заверен печатью медицинского учреждения и в котором должны быть указаны имя, фамилия, даты поступления и выписывания, осуществленные лабораторные и/или аппаратные обследования, окончательный диагноз, предписанное лечение (список лекарств, включая дозу, количество дней их приминения), а также результаты проведенных лабораторных и/или аппаратных обследований.

в) финансовые документы (необходимо представить для возмещения фактических произведенных первичных медицинских расходов):

- При покупке лекарств – чек ККМ (Контрольно-кассовой машины) и перечень предоставленных лекарственных средств.
- чек ККМ, документ, содержащий перечень предоставленных услуг, квитанция к ПКО (Приходный

ա) սույն Պայմանների 10.1. կետում նշված փաստաթղթերը,
բ) Բժշկական փաստաթղթեր.

- Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն ստանալու դեպքում՝ բժշկական փաստաթուղթ, որը պետք է լրացված լինի բժշկի կամ բժշկական հաստատության ձևաթղթի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և որտեղ պետք է նշված լինեն Ապահովագրված անձի անունը, ազգանունը, դիմելու ամսաթիվը, կատարված և/կամ նշանակված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները, նախնական ախտորոշումը, վերջնական ախտորոշումը, նշանակված բուժումը (դեղերի ցանկը, ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը), ինչպես նաև կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները,
- Ստացիոնար բուժման դեպքում՝ էպիկրիզ (քաղվածք հիվանդության պատմությունից), որը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բժշկական հաստատության կնիքով և որտեղ պետք է նշված լինեն Ապահովագրված անձի անունը, ազգանունը, դիմելու և դուրսգրման ամսաթիվը, կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները, վերջնական ախտորոշումը, նշանակված բուժումը (դեղերի ցանկը, ներառյալ՝ դեղերի չափաբաժինն, ընդունման օրերի քանակը), կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները,

գ) Ֆինանսական փաստաթղթեր (անհրաժեշտ է ներկայացնել փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերով հատուցում ստանալու համար),

- Դեղորայքի կամ բժշկական պարագաների գնման դեպքում՝ ՀԴՄ (Հսկիչ դրամարկղային մեքենաների) կտրոն և տրամադրված դեղորայքի անվանացանկ կամ հաշիվ-ապրանքագիր,
- ՀԴՄ կտրոն, դրամարկղի մուտքի օրդերի անդորրագիր կամ վճարման փաստը հաստատող այլ փաստաթուղթ: Այն դեպքում, երբ ներկայացված ֆինանսական փաստաթղթերի վրա առկա չի տրամադրված ծառայությունների անվանացանկը, անհրաժեշտ է ներկայացնել տրամադրված ծառայությունների անվանացանկը պարունակող փաստաթուղթ կամ հաշիվ-ապրանքագիր (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի Բժշկական հաստատության կնիքով):

**10.3.** Ապահովագրված անձի մահվան դեպքում Ապահովագրողին ներկայացվում են՝
ա) սույն Պայմանների 10.1., 10.2 կետերում թվարկված փաստաթղթերը,
բ) Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ դրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճենը,
գ) բժշկական փաստաթուղթ կամ դրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճենը, որտեղ նշված է Ապահովագրված անձի մահվան պատճառը (մահվան բժշկական վկայականից քաղվածք, դատաբժշկական եզրակացություն և այլն),

кассовый орден) или инвойс и документ, подтверждающий факт оплаты (должны быть указаны вид предоставленной медицинской услуги, тариф, размер оплаченной суммы, дата оплаты, должны быть заверены печатью медицинского учреждения).

**10.3**. В случае смерти Застрахованного лица представляются:
а) документы, перечисленные в п. 10.1., 10.2. настоящих Правил,
б) оригинал свидетельства о смерти Застрахованного лица или надлежащим образом заверенная копия в порядке, установленном законодательством РА,
в) медицинский документ или надлежащим образом заверенная его копия в порядке, установленном законодательством РА, где указана причина смерти Застрахованного лица (выписка из медсвидетельства о смерти, судебно-медицинское заключение и др.),
г) копия свидетельства о праве на наследство, надлежащим образом заверенная в порядке, установленном законодательством РА (представляется только наследником или наследниками),

**10.4.** В случае установления Застрахованному лицу группы (категории) инвалидности Страховщику представляются следующие документы:
а) документы, перечисленные в п.10.1., 10.2. данных Правил,
б) заключение медико-социальной экспертизы или комиссии относительно группы (категории) инвалидности,

**10.5.** В случае временной недееспособности Застрахованного лица Страховщику предоставляются следующие документы:
а) докумнеты, перечисленные в п.10.1., 10.2. данных Правил,
б) листок временной недееспособности из медицинского учреждения, где прошло лечение, справка установленной формы об амбулаторном или стационарном лечении, содержащая сведения о полном диагнозе Застрахованного лица, сроков лечения, лечебных и диагностических мероприятиях,

**10.6.** Все документы, представленные медицинскими учреждениями или компетентными органами, должны быть представлены на соответствующем бланке, заверенными подписью и с соответствующей печатью, а если документ составлен не на бланке, необходима подпись компетентного должностного лица и печать учреждения.

**10.7.** В случае если представленные Страховщику документы не дают возможность принять решение относительно страховой выплаты, Страховщик вправе запросить дополнительные документы, необходимые для принятия окончательного решения, а также провести экспертизу предоставленных документов, самостоятельно выяснить причины и обстоятельства страхового случая.

դ) ժառանգության նկատմամբ իրավունքի վկայագրի բնօրինակը կամ պատճենը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված (ներկայացվում է միայն Ապահովագրված անձի ժառանգի կամ ժառանգների կողմից):

**10.4.** Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգավիճակ) սահմանելու դեպքում Ապահովագրողին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) սույն Պայմանների 10.1., 10.2. կետերում թվարկված փաստաթղթերը,

բ) հաշմանդամության խմբի (կարգավիճակի) վերաբերյալ բժշկասոցիալական փորձաքննության կամ հանձնաժողովի եզրակացությունը:

**10.5.** Ապահովագրված անձի ժամանակավոր անաշխատունակության դեպքում Ապահովագրողին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) սույն Պայմանների 10.1., 10.2. կետերում թվարկված փաստաթղթերը,

բ) անաշխատունակության թերթիկ բուժհիմնարկից, որտեղ անց է կացվել բուժումը, սահմանված ձևի ամբուլատոր կամ ստացիոնար բուժման վերաբերյալ տեղեկանք, որը պարունակում է տեղեկություններ Ապահովագրված անձի լրիվ ախտորոշման, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին:

**10.6.** Բժշկական հաստատություններից կամ իրավասու մարմիններից ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն համապատասխան ձևաթղթի վրա և վավերացված լինեն ստորագրությամբ և համապատասխան կնիքով, իսկ եթե փաստաթուղթը կազմված չէ ձևաթղթի վրա, անհրաժեշտ է փաստաթուղթը տրամադրած հաստատության իրավասու մարմնի ստորագրության և հաստատության կնիքի առկայությունը:

**10.7.** Այն դեպքում, երբ Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերը չեն տալիս ապահովագրական հատուցման մասին որոշում ընդունելու հնարավորություն, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերջնական որոշում ընդունելու համար, ինչպես նաև անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն, ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները:

**10.8.** Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել՝

ա) Ապահովագրված անձին,

բ) Շահառուին,

գ) Ապահովագրված անձի ժառանգներին հետևյալ դեպքերում՝

- եթե Ապահովագրված անձը մահացել է՝ չստանալով 4.1.1., 4.1.2., 4.1.3., 4.1.5. ենթակետերի համաձայն նրան հասանելիք ապահովագրական հատուցումը՝ այդ հատուցման և արդեն իսկ վճարված գումարների տարբերության չափով,
- եթե Շահառուն դիտավորյալ զրկել է Ապահովագրված անձին կյանքից կամ

**10.8.** В случае принятия решения о признании события, имеющего признаки страхового случая, страховым, страховая выплата может быть произведена:

а) Застрахованному лицу,

б) Выгодоприобретателю,

в) наследникам Застрахованного лица в следующих случаях.

- если Застрахованное лицо умерло, не получив причитающуюся ему страховую выплату в соответствии с п.п. 4.1.1., 4.1.2., 4.1.3., 4.1.5. в размере разницы выплаты и уже выплаченных денежных средств,
- если Выгодоприобретатель умышленно лишил жизни Застрахованное лицо или умышленно причинил ему телесные повреждения, повлекшие его смерть,
- если Выгодоприобретатель не указан или погиб раньше Застрахованного лица,
- если до принятия решения о страховой выплате наступила смерть Застрахованного лица и Выгодоприобретателя.

г) Наследникам Выгодоприобретателя, если после смерти Застрахованного лица последовала смерть Выгодоприобретателя, и он не успел получить причитавшуюся ему страховую выплату в размере разницы выплаты и уже выплаченных денежных средств.

**10.9.** В случае наступления событий, предусмотренных п.п. 4.1. настоящих Правил, размер страховой выплаты определяется в соответствии с одним из следующих способов, предусматриваемых Договором/Полисом:

а) в процентах от страховой суммы: Договором/Полисом может быть предусмотрен максимально допустимый размер страховой выплаты за причинение вреда здоровью Застрахованного лица,

